Այս բաները, ի հարկէ, Մըհէն ինձանից լաւ էր հասկանում. ես համաձայնեցայ, միայն հարցրի, թէ մինչեւ ե՞րբ կարող էր նա հասցնել մեզ ձին:

— Մի օրից յետոյ, — պատասխանեց նա, — որովհետեւ այն ճանապարհը, որտեղից նա պէտք է ձին բերէ, մի օրով երկար է:

Մենք շարունակեցինք գնալ:

— Բայց մենք ե՞րբ կարող ենք հասնել այն տեղը, որտեղ այժմ գտնւում է Ասլանը, — հարցրի ես Մըհէից:

— Թէ որ ամբողջ գիշերը գնալու լինենք, էգուց կէսօրին կը հասնենք, — ասաց նա:

— Ամբողջ գիշերն ինչպէ՞ս կարող ենք գնալ առանց հանգստանալու, ես հիմակոանից յոգնած եմ:

— Թէ որ չես կարող, — ասաց նա խիստ սառը կերպով, — ես քեզ թող կը տամ, ինչպէս քո ձիուն: Ես նորահարսի հետ քայլելու համբերութիւն չունեմ...

Ես մեղմութեամբ պատասխանեցի.

— Մըհէ, դու իմանում ես, որ ես սովոր չեմ այսպիսի քարերի մէջ ոտքով երկար ման գալ:

— Հիմա սովորի՛ր:

— Կը սովորեմ, բայց մի անգամով չէ կարելի:

— Թէ որ յոգնես, քեզ կառնեմ շալակս:

— Ես խօ երեխայ չե՞մ:

— Ապա ի՞նչ ես, — հարցրուց նա վայրենի ժպիտով:

Ես ոտքով ճանապարհորդելու մէջ շատ թոյլ չէի, բայց ինձ թուլացրել էր գլխիս վէրքը եւ արեան չափազանց սպառոիլը: Բայց Մըհէի նման երկաթի մարդու ծիծաղը միայն կը շարժէր, եթէ նրան ասէի, թէ վէրքիս պատճառով է, որ ես չեմ կարողանում նրա հետ ընթանալ: Նա իր մարմնի վրայ ունէր անթիւ մեծամեծ սպիներ, որոնք ստանալու ժամանակ երբեք թուլացած չէ եղել...

Արեւը մտաւ: Բարեբախտաբար այն գիշեր լուսնկայ էր: Ես ստիպուած էի հպատակել իմ խստասիրտ ուղեկցի կամքին: Գիշերային հովասուն պահուն ճանապարհորդութիւնը շատ յոգնեցուցիչ չէ լինում, այսոամենայնիւ, երբ կէսգիշեր դարձաւ, ես բոլորովին թուլացայ: Մըհեն նկատեց այդ, երեւի նա խղճաց իմ վրայ: — Մի փոքր էլ գնանք, ասաց նա, ձորի մէջ հովիւների վրաններ կան, քեզ այնտեղ կը հանգստացնեմ: Բայց Մըհէի լեզոով ամէն խոշոր բան փոքր էր, ամէն երկար բան կարճ էր: Լուսաբացին երկու ժամ մնա-